



Թի 39

ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա. 2019



ԲԱԶԵՆ ԵՒ ՃԻՒՂ

Ժամանակին կար թագաւոր մը, որ ուներ երկու բազէներ: Անոնք շատ գեղեցիկ էին, այդ պատճառով թագաւորը անոնց ինամբը կը յանձնէ մասնագետի մը: Ամիսներ ետք մասնագետը թագաւորին կը տեղեկացնէ, թէ հակառակ որ բազէներէն մէկը շատ լաւ կը թռչէր, սակայն միւսը ճիւղին վրայէն չէր շարժեր:


Թագաւորը ամէն կարելի միջոց փորձելէ ետք, ճարահատ, պալատականներուն կը հրահանգէ գիւղացի մը բերել, որ թերեւս իր փորձառութեամբ կարենայ բազէն մղել թռչելու: Յաջորդ առաւօտ թագաւորը շատ

կ'ուրախանայ, երբ կը տեսնէ, որ բազէն արդէն իսկ կը թռչէր: Կը հրահանգէ, որ իր մօտ բերեն այն գիւղացին, որ կրցաւ բազէն թռչիլ տալ: Թագաւորը կը հարցնէ գիւղացիին, թէ ինչպէ՛ս յաջողեցաւ բազէն թռչելու մղել, երբ մասնագետներ ձախողեցան:

Գիւղացին կը պատասխանէ.

- Շատ դիրին էր, ես պարզապէս կտրեցի այն ճիւղը, որուն վրայ նստած էր բազէն:

Ուրեմն սիրելիներ, այս պատմութիւնը ցոյց կու տայ թէ յաճախ դժուար կարծուած հարց մը կարելի է տրամաբանութեամբ լուծել:



Թիւ ԽԱՏՐԱՍՏԵՐ՝ ՈՒԹԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵՆԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՐ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՇԵՆԱՆ

ԱԼԱ ԷՏՏԻՆ ՈՒ ԼԱՄԲԸ



Ալա Էտտին կը սարսափի, կը մտածէ՝ ի՞նչ ընէ, ինչպե՞ս դուրս ելլէ քարայրէն: Մտահոգ, կը նստի ծառի մը տակ ու կը սկսի ձեռքերը շփել. անշուշտ երբ ձեռքերը կը շփէ, մատանին ալ հետը կը շփէ:

Յանկարծ քարայրը կը պատուի գոյնզգոյն ծուխերով: Ծուխերուն մէջէն կը յայտնուի հսկայ մը.

- Զրամանքդ, տէ՛ր,- կը գոռայ հսկան:

- Ո... ո... ո... ո՞վ ես դուն,- կը հարցնէ Ալա Էտտին ապշած:

- Ես ծառան եմ անոր, որ տէրը կը դառնայ այս մատանիին: Ամէն անգամ, որ գայն շփես, գիս մօտդ կը գտնես:

Զրամայէ՛ ու անմիջապէս հրահանգդ կը կատարուի,- կ'ըսէ հսկան:

- Չիս մօրս քով տար,- կ'աղաչէ Ալա Էտտին: Ակնթարթի մը մէջ, Ալա Էտտին ինքզինք կը գտնէ իրենց տան դիմաց, մօրը քով: Զսկան կ'անհետանայ:

Ալա Էտտին կը փաթթուի մօրը, կը պատմէ պատահածները ու ցոյց կու տայ այն լամբը որուն համար կախարդը փակած էր գինք քարայրին մէջ:

- Այս ի՞նչ հին լամբ է,- կ'ըսէ մայրը ու ձեռքի լաթով կը սրբէ անոր փոշին:

Ճիշդ այդ պահուն, լամբէն թանձր ծուխ մը կը բարձրանայ ու կը պատէ ամբողջ սենեակը:

Անուշ հոտ մը կը բուրէ տան մէջ ու ծուխերուն մէջէն կը յայտնուի հսկայ մը, նախորդ հսկայէն շատ աւելի հուժկու:

- Զրամանքդ, տէ՛ր,- կը գոռայ հսկան:

Ալա Էտտինի մայրը սարսափահար անկիւն մը կը կծկուի.

Ալա Էտտին, որ արդէն վարժ էր նման անակնկալներու, կը ժպտի:

- Անօթի ենք, մեզի համեղ ճաշ մը բե՛ր,- կը հրամայէ ան:

Ակնթարթի մը մէջ, հսկան՝ խոշոր ափսէ մը ձեռքին, մէջը լեցուն պտուղ ու միս, կը հրամցնէ Ալա Էտտինի:

Ալա Էտտին շնորհակալութիւն կը յայտնէ անոր ու հսկան կ'անհետանայ:

Ալա Էտտինն ու մայրը կ'ապրին հանգիստ ու երջանիկ: Անոնց համար այլեւս անկարելի բան չկար: Ինչ որ փափաքէին շուտով ձեռք կը ձգէին:

Ալա Էտտին կ'որոշէ ամուսնանալ: Լուր կ'ուղարկէ իրենց երկրի թագաւորին եւ փափաք կը յայտնէ ամուսնանալ իշխանուհիին հետ:

Թագաւորը Ալա Էտտինը կը հրաւիրէ պալատ: Ալատտին կը յայտնէ թագաւորին, թէ ինք տէր է բազմաթիւ կալուածներու եւ մեծ հարստութեան:

Թագաւորը կը կասկածի անոր խօսքերուն ու կը խոստանայ յաջորդ օրն իսկ, իշխանուհիին հետ այցելել անոր դղեակը:

Ալա Էտտին ուրախութեամբ կ'ընդունի թագաւորին առաջարկը:

Ան հազիւ տուն վերադարձած՝ կը շփէ կախարդական լամբը ու կը հրամայէ հսկային, որ իշխանավայել դղեակ մը պատրաստէ:

(Շարունակելի)



Առանց դպրոցի դպրոցը

Կարգ մը աղքատ երկիրներու մէջ դպրոց գացող մանուկները դպրոց չունին: Օրինակի համար Փաքիստանի մէջ կարգ մը աշակերտներ դասերու կը հետեւին հանրային պարտեզի մը մէջ, անոնք հոն է, որ կ'աշխատին ամբողջ օրը, որովհետեւ կառոյցներ չկան գիրենք ընդունելու համար:

Պենկլատեշի մէջ, երբ քանի մը օր տեսող եւ ողորումներ պատճառող սաստիկ անձրեւներու եղանակը կու գայ, հազարաւոր դպրոցներ կը գոցեն իրենց դռները: Հետեաբար սաակներ կը շրջագային հաւաքելու համար աշակերտները, եւ դասերը տեղի կ'ունենան այդ սաակներուն վրայ:

Չիրար լսենք

Դանիոյ մէջ ամեն շաբաթ բոլոր աշակերտները կը հետեւին յատուկ դասի մը, որուն ընթացքին անոնք կը սորվին հասկնալ դիմացինին զգացածը: Մէկ ժամուան ընթացքին անոնք կը վիճաբանին, կը խօսին իրենց զգացածին մասին, խնդիրներուն մասին, այն մասին, ի՞նչ կը սիրեն, ի՞նչ չեն սիրեր... Անոնք զիրար մտիկ կ'ընեն եւ միասին լուծումներ կը փնտռեն, երբ հարց մը գոյութիւն ունի: Այս նիւթը ստիպողական է 1-16 տարեկան աշակերտներուն համար:

Բոլորը՝ խոհանոցին մէջ

Իսլանտայի մէջ խոհանոցը մաս կը կազմէ դպրոցական ծրագիրին: Պատմութեան եւ թուաբանութեան կողքին, 7-13 տարեկան բոլոր աշակերտները այս նիւթին կը հետեւին: Շաբաթը անգամ մը անոնք կ'երթան դպրոցին խոհանոցը եւ գործի կ'անցնին: Սակայն, ուշադրութի՛ւն, այս նիւթին դասաւանդութիւնը շատ լուրջ է, աշակերտները պարզապէս համով ճաշեր պատրաստել չեն սորվիր, այլ անոնք կը սորվին մասնաւորաբար հաւասարակշռուած կերպով ուտել շատ չգիրնալու համար, եւ յատկապէս՝ առողջ ըլլալ:

Համով ճաշեր պատրաստել սորվելու կողքին, փոքրիկ իսլանտացիները կը սորվին նաեւ թէ ո՞ր ուտելիքները առողջութեան համար լաւ են, եւ թէ որոնցմէ՛ պէտք է հեռու մնալ, ինչպէս նաեւ՝ ուտելիքի հետ կապուած հիւանդութիւններու մասին ինչպէս՝ շաքարախտը, շատակերութիւնը կամ ուտելի դաղբելու վիճակը:

